ՌԽՖՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏԻ ՄԵԹՈՍԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ

2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

379
Ի-61

ԱՂԴԵԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
1938 Թ.

26 APR 2013

54.767

379
Ի-61

06 APR 2010

ՀՍԽՀ-ССР

6129
38

# ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ

*Նախ քան սույն բրոշյուրից օգտվելը խնդրում ենք ուղղել ստորև նշած կարևոր վրիպակները*

| Եջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 3 | ներքևից 7-րդ տող | տարատեսականությունը | տարատեսակությունը |
| 4 | վերևից 5-րդ տող | այդպիսի | այդպիսի |
| 4 | ներքևից 6-րդ տող | տառել | տառեր |
| 5 | ներքևից 10-րդ տող | դպրոցի | դպրոցի |
| 6 | վերևից 7-րդ տող | բաժինները | բաժինները |
| 11 | վերևից 15-րդ տող | Ցերկրորդ | Ցոթերորդ |
| 11 | վերևից 16-րդ տող | գրավաճառներ | գրագրիչներ |
| 11 | ներքևից 4-րդ տող | քաղաքական դաստիա-րակչական | քաղլուսավորական |
| 18 | ներքևից 5-րդ տող | ոգնեն | ոգնի |
| 18 | ներքևից 6-րդ տող | դրանք | դա |

[illegible] դպրոցում կամ պարապել են ինքնակրթությամբ։ Ընդհատելով ուսումները, նրանք յուրացրել են ծրագրային նյութի միայն մի մասը, օրինակ՝ կարողանում են կարդալ վանկերով, բայց չեն կարողա-

26 APR 2013
54.767
379
Ի-61
06 APR 2010

# ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ

ՌՈՍՏՈՎ Լուսժողկոմատի մեծահասակների կրթության վարչության կողմից անցկացրած ստուգումը ցույց է տվել, որ դպրոցների և խմբակների կոմպլեկտավորումը շատ շրջաններում ճիշտ չեն անցկացնում։

Ժողովրդական կրթության բաժինները, փոխանակ նրան, որպեսզի յուրաքանչյուր անգրագետին մոտենան ինդիվիդուալ ձևով, հաշվի առնեն նրա գիտելիքները, նրա կենցաղային և արտադրական պայմանները և, յենելով յուրաքանչյուր անգրագետի հատկություններից, որոշեն որտեղ և ինչպես է հարմար նրան գրագիտություն սովորեցնել, նրանք բոլոր անգրագետներին խմբովին են մոտենում։

Դեպի անգրագետներն ունեցած այդ խմբովին մոտեցումն արտահայտվում է նրանում, որ դպրոցների և խմբակների կոմպլեկտավորման ժամանակ, հաճախ հաշվի չի առնվում անգրագետների կազմի տարատեսակությունը ըստ գիտելիքների։ Հաշվառումը ցույց է տալիս, որ բոլորովին անգրագետների շարքում քիչ չեն այն աշխատավորների թիվը, որոնք տարբեր ժամանակ սովորել են անգրագետների դպրոցում կամ պարապել են ինքնակրթությամբ։ Ընդհատելով ուսումները, նրանք յուրացրել են ծրագրային նյութի միայն մի մասը, որինակ՝ կարողանում են կարդալ վանկերով, բայց չեն կարողա-

նում գրել, կարողանում են գրել և կարդալ, բայց խեղաթյուրումներով, տառեր բաց թողնելով, և չեն կարողանում հաշվել։

Աշխատավորների այդ մասը չի կարող բոլորովին անգրագետ համարվել, բայց միևնույն ժամանակ այդպիսի վոչ լրիվ գիտելիքներով չի կարելի ընդունել նրանց կիսագրագետների դպրոցը։

Այսպես, որինակ՝ Կալինինսկի մարզի Բոլոտովսկու շրջանի Բերեզայսկու գյուղխորհուրդում հաշվառման վերցրած 242 հոգուց բոլորովին անգրագետ են դուրս եկել 92 հոգի, 90 հոգի կարողացել են կարդալ, բայց չեն կարողացել գրել և հաշվել, 60 հոգի կարիք են զգացել թվաբանության ուսուցման մեջ։

Հաշվի չառնելով այդ գիտելիքները, ժողովրդական կրթության բաժինները հաճախ բոլորովին անգրագետի կողքին նստեցնում են կարդալ իմացողին, հաշվել չկարողացողի կողքին—թվաբանություն իմացողին և այլն։

Այսպես, որինակ՝ ՎՈԳՐԵՍ գործարանում (Վորոնեժ) խմբակ են ընդունել 32 հոգի։ Այդ մարդկանց թվում 7 հոգի բոլորովին անգրագետ են, 16 հոգի կարդում են վանկերով, իսկ 9 հոգի լավ կարդում են, բայց վատ են գրում։ Այդպիսի կոմպլեկտավորումը բերում է խմբակների քայքայմանը։

Սովորողներն այդպիսի դպրոցներից փախչում են։ Ահա թե ինչ է գրում նրանցից մեկը. «Ցես քաղաքացի Ա. Դ. Յակիմս, լինելով լիկկայանի աշակերտ, զգում եմ, որ այս ուսուցումն ինձ համար բոլորովին անոգուտ է, որովհետև ես գրագետ մարդ եմ, և ինձ համար անհետաքրքիր է տառել սովորելը»։

Դեպի անգրագետներն ունեցած խմբովին մոտեցումն արտահայտվում է նաև նրանում, որ դպրոցների և խմբակների կոմպլեկտավորման ժամանակ բոլորովին հաշվի չեն առնվում յուրաքանչյուր անգրագետի կենցաղային և արտադրական պայմանները։



Շատ անգրագետներ, նամանավանդ կանայք, մի շարք պատճառներով, չեն կարողանում դպրոց հաճախել, նրանց համար հարկավոր է կազմակերպել ինդիվիդուալ ուսուցում տանը, շատ անգրագետներ չեն կարողանում յերեկոները դպրոց հաճախել, նրանց համար հարկավոր է ուսուցումը կազմակերպել ցերեկը։ Յեվ այնտեղ, վորտեղ չեն ուսումնասիրում անգրագետներին, վորտեղ չեն ստեղծում պայմաններ նորմալ ուսուցման համար, շատ անգրագետներ մնում են չընդգրկված ուսուցումով։

Սմոլենսկու մարզի Ժուկովսկու շրջանի Ֆոնյանսկու գյուղխորհուրդում շատ կանայք ընդգրկված չեն ուսուցումով այն բանի համար, վոր չեն ցանկացել դպրոց հաճախել յերեկոները, այն եվ 2 կիլոմետր ճանապարհ կըտրել, վորովհետև տեղ չկա յերեխաներին պահելու համար։ Իսկ ցերեկները նրանց համար ուսուցում չեն կազմակերպել։

Այդ բոլորն ասում են այն, վոր ուսուցումը հարկավոր է կազմակերպել յուրաքանչյուր աշխատավորի ինդիվիդուալ հատկությունների մանրակրկիտ հաշվառման հիման վրա։ Դա կբարձրացնի հետաքրքրությունը դեպի ուսուցումը, և, վոր գլխավորն է, կապահովի ամբողջ ծրագրի նորմալ անցումը։

## ՈՎ Ե ՅԵՆԹԱԿԱ ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ

Անգրագետների համար դպրոցի ծրագրով ուսուցմանը յենթակա յեն.

ա) Անգրագետները, այսինքն նրանք, վորոնք բոլորովին չեն կարողանում գրել և կարդալ։

բ) Կարդալ իմացողները (տառերով, վանկերով, ամբողջ խոսքերով), բայց գրել չկարողացողները։

գ) Կարդացողները (վանկերով, ամբողջ խոսքերով, դանդաղ և խոսքերի խեղաթյուրումով, տառերի, վանկերի բաց թողնումով, ավելորդ տառերի ներդրումով (вставка) և այլն։

դ) Գրել և կարդալ իմացողները, բայց տարրական թվաբանություն չիմացողները։

Ըստ գիտելիքների մակարդակի վերև թվարկված կատեգորիաներին վերաբերող սովորողները կոմպլեկտավորվում են հատուկ, առանձին խմբակներում։ Նման խմբակների կազմակերպումը արգելվում է։ Ժողովրդական կրթության բաժինները պետք է առավելապես կազմակերպեն մանր խմբակային և ինդիվիդուալ ուսուցում։

Յուրաքանչյուր խմբակում հարկավոր է ուսուցումը սկսել անգրագետների համար դպրոցների ծրագրի այն մասից, որը յուրացված չէ աշակերտների կողմից, և խմբակի գիտելիքների մակարդակից յելնելով, սահմանել ծրագրի յուրացման ժամկետ ու մշակել աշխատանքի ուսումնական պլան։

## ՃԻՇՏ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՄԱՆՐԱԿՐԿԻՏ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Ուսուցման յենթակաների հաշվառումը և խմբակների կոմպլեկտավորումը հարկավոր է հանձնարարել փորձառու ուսուցիչներին։ Հաշվառման ժամանակ հարկավոր է պարզել՝ ով ինչ է իմանում, վոնց է կարդում, գրում, հաշվում։ Առանց դրան չի կարելի ուսուցումը հետաքրքիր դարձնել։ Հարկավոր է գնահատել յուրաքանչյուր բոպեն և չսովորեցնել մեծահասակին այն, ինչ նա արդեն իմանում է։

Բերեզայսկու գյուղխորհրդում մշակել են համառոտ անկետ, վորով ոգտվել են ուսուցիչները գրագիտության աստիճանը վորոշելու ժամանակ։ Մեծահասակների կրթության վարչությունը հանձնարարում է ուսուցման յենթակաների գիտելիքների հաշվառման ժամանակ ոգտվել այդ անկետից (տես անկետը 7-րդ եջում)։

Բերեզայսկու գյուղխորհրդում գիտելիքների մանրակրկիտ հաշվառումը հնարավորություն է տվել ճիշտ կազմակերպել անգրագետների ուսուցումը, այնտեղ կազմակերպել են առանձին խմբակներ՝ 1) բոլորովին անգրագետների համար, 2) կարդալ իմացողների և գրել ու հաշվել չկարողացողների համար, 3) կարդալ և գրել կարողացողների, բայց թվաբանություն չիմացողների համար։

Գիտելիքներից բացի, հաշվառման ժամանակ հարկավոր է յերևան հանել անգրագետի արտադրական յեվ կենցաղային պայմանները, այն պատճառները, շնորհիվ վորոնց նա մինչև այժմ գրագիտություն չի սովորել։ Այդ բոլորը հնարավորություն կտա գրագիտության ուսուցումը կազմակերպել յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունների համեմատ։ Ահա ինչպես, որինակի համար,

## ԱՆԿԵՏ

| Հարցեր | Պատասխաններ |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | ..... |
| Ծննդյան տարին | ..... |
| Վորտեղ է աշխատում | ..... |
| Բնակության հասցեն | ..... |

### Ինչպես է կարողանում կարդալ (ընդգծել)

Բոլորովին չի կարողանում կարդալ, կարդում է տառերով յեվ կարդացածը հասկանում է, կարդում է վանկերով յեվ հասկանում է կարդացածը, կարդում է ամբողջ խոսքերով։

.....
.....
.....
.....
.....
.....
.....

### Ինչպես է գրում (ընդգծել)

Բոլորովին չի կարողանում գրել, կարողանում է միայն արտագրել, գրում է ինքնուրույն, բայց բացթողումներով, գրում է ինքնուրույն առանց տառերի բացթողումներով

(գիտելիքները պարզելու համար առաջարկել արտագրել կամ ինքնուրույն գրել)։

.....

.....

.....

.....

.....

.....

.....

## Ինչպես է հաշվում (ընդգծել)

Բոլորովին չի կարողանում, գիտե թվերի համարակալումը հազարի սահմաններում, գիտե թվաբանական գործողությունները (պարզելու համար վճռել հետևյալ որինակները)։

| | | | |
|---|---|---|---|
| +129 | +2750 | —572 | —2305 |
| 363 | 3409 | 46 | 1276 |

1863 : 9 =

Ով է ամրացված կրթության համար։

Ուսուցչի կամ կուլտբանակայնի ազգանունը, անունը յեվ հայրանունը .....

.....

Բնակության հասցեն (ուսուցչի կամ կուլտբանակայնի)

.....

«.....» ..... 193 թ.

Գիտելիքների հաշվառում
կատարողի ստորագրությունը .....

Կազմակերպված ե՝ յեղել մեծահասակների կրթությունը Բերեզայկու բանշենում։ Այնտեղ սովորելիս են յեղել 62 հոգի, վորոնցից 43-ը յերեք դպրոցներում, իսկ 19 հոգի անհատական ձևով։ «Պոբեդա» կոլտնտեսությունում սովորելիս են յեղել 13 անգրագետներ։ Նրանց բաժանել են յերկու խմբակի, յուրաքանչյուր խմբակում 6-ական հոգի, իսկ մեկը սովորել ե անհատական ձևով։

«Կրասնի ինվալիդ» կոլտնտեսությունում 11 անգրագետ կային։ Մի խմբակում սովորել են 2 հոգի, մյուսում



3, յերրորդում 4, մեկը սովորել ե անհատական ձևով։ Նույն ձևով են յեղել կազմակերպված խմբակները Բերեզայկու գյուղխորհուրդի բոլոր կոլտնտեսություններում յեվ ձեռնարկություններում։

## Կրթության պլանն ու ժամկետները

Հաշվառման և կոմպլեկտավորման այդպիսի կազմակերպումը հնարավորություն կտա գյուղխորհրդի և քաղխորհրդի կից անգրագիտության վերացման սեկցիաներին յեվ ժողովրդական կրթության բաժիններին ճշտորեն սահմանել անգրագիտության վերացման պլանն ու ժամկետը՝ յուրաքանչյուր սովորողի, յուրաքանչյուր կոլտնտեսության, ձեռնարկության համար։ Մի շարք տեղերում, ինչպես որինակ, Սմոլենսկու յեվ Վորոնեժի մարզերում, անգրագիտության վերացման ավարտման պլանները կազմվել են շրջանային ժողովրդական կրթության բաժինների կողմից՝ վերեվից, առանց յուրաքանչյուր սովորողի գրագիտության աստիճանի հաշվառման, առանց այն ռեալ դրության հաշվառման, վորի սահմաններում կազմակերպվել ե այդ աշխատանքը։ Այդպիսի պլանները միմիայն խանգարել են աշխատողներին, վոչ մի ոգուտ չբերելով։ Ռեալ պլան կազմել կարելի յե միմիայն յուրաքանչյուր անգրագետին անհատական մոտեցումով, նկատի ունենալով նրա գիտելիքները, իմանալով, ինչ պետք ե նրան սովորեցնել, վորտեղ պիտի նա սովորի, վորքան ժամանակ կպահանջվի նրա կրթության համար և այլն։

Անգրագիտության վերացման ավարտման պլանը պետք ե հայտնի դարձնել լայն հասարակայնությանը, բոլոր սովորող կոլտնտեսականներին յեվ յուրաքանչյուր կոլտնտեսության ակտիվին։ Դա մեծ դեր ե խաղում անգրագիտության վերացման համար կոլտնտեսության բոլոր ուժերի ներգրավման գործում՝ անգրագիտության շուտափույթ վերացման համար։ Այդ նպատակներով անգրագիտության վերացման ավարտման այդպիսի պլանները պետք ե քննարկվեն բանվորների յեվ կոլտնտեսականների ժո-

ղովներում, գյուղխորհուրդի, պրոֆմիությունների պլենումներում, ցանկալի յե պլանի քննարկում կատարել նաև կոմյերիտմիության ժողովներում:

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱՏԵՂՈՒՄԸ ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Առաջավոր գյուղխորհուրդների փորձը ցույց ե տվել, վոր մեծահասակներին գրագիտություն սովորեցնելու համար՝ նրանց գիտելիքների հաշվառման հիման վրա, անհրաժեշտ ե ներգրավել բոլոր կուլտուրական ուժերը յեվ նրանց ճիշտ տարատեղել: Այդ փորձը պետք ե որինակ ծառայի տարվելիք աշխատանքի համար:

Նախ յեվ առաջ այնտեղ մանրակրկիտ կերպով ստուգել են ուսուցիչներին յեվ նրանց նշանակման ժամանակ յուրաքանչյուր առանձին դեպքում հաշվի յեն առել սովորողների կենցաղային պայմաններն ու կուլտուրական մակարդակը: Մինչ այն հարցի վորոշելը, թե վոր ուսուցչին ամրացնել այս կամ այն անգրագետին, սովորողի հետ անց են կացրել զրույց, յերբեմն էլ մի քանի զրույցներ, ծանոթացրել են նրան ուսուցչի հետ, յեվ միայն դրանից հետո յեն վորոշել ամրացման հարցը: Ուժերի տարատեղմանն ունեցած այդպիսի մոտեցումը հնարավորություն ե տվել ճիշտ հողի վրա դնել ուսուցումը:

Ուժերի տարատեղման գործում շատ կարևոր ե նաև այն, վորպեսզի յուրաքանչյուր ակտիվիստ-հասարակական աշխատող մասնակցի այդ աշխատանքին ըստ իր գիտելիքների յեվ կարողությունների: Ամենադժվար տեղամասում հարկավոր ե ոգտագործել փորձառու ուսուցչին: Այսպես, որինակ, բոլորովին անգրագետների ուսուցումը հարկավոր ե հանձնարարել փորձառու ուսուցիչներին, վորովհետև այդ սովորողների համար առաջին իսկ դասերից հարկավոր ե հմուտ, վստահ մոտեցում յեվ գրագետության ուսուցման մեթոդների լավ գիտելիքներ:

Բերեզայակու գյուղխորհրդի «Պոբեդա» կոլտնտեսությունում բոլորովին անգրագետներին ուսուցել ե 28 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչ Պոպո-



վը, Ստալինի անվան կոլտնտեսությունում—16 տարվա
մանկավարժական ստաժ ունեցող ուսուցչուհի Կրիլովան:
Նրանց համար, ում հարկավոր ե միայն հաշիվ սովո-
րեցնել, հարկավոր ե ներգրավել մաթեմատիկայի ուսու-
ցիչներին յեվ կուլտ-բանակային կոլտնտեսականներին,
մեծ մասամբ հաշվապահներին:

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցի բարձր դասարանների
ուսուցիչները՝ ֆիզիկոսները, քիմիկոսները, բիոլոգները,
աշխարհագետները պիտի ներգրավվեն, գլխավորապես, սո-
վորողների համար հասարակա-քաղաքական, հակակրոնական
յեվ ուրիշ թեմաների շուրջը զանազան դասախոսություն-
ներ յեվ զրույցներ անցկացնելու համար:

Գրադարանապետները՝ շարժական գրադարանների յեվ
բարձր ընթերցանության գործը կազմակերպեն:

Յերկրորդ դասարանի աշակերտները կարող են աշխա-
տել վորպես շրջիկ գրավաճառներ: Կոմյերիտականները,
ըստ կրթության աստիճանի, կարող են ուսուցանել կամ
ոգնել կարգավորելու ուսումնական աշխատանքը խմբակ-
ներում (պարզել չհաճախելու պատճառները յեվ վերա-
ցնել նրանց, ոգնել դասագրքեր, տետրեր ձեռք բերելու
գործում, հսկել, վորպեսզի պարապմունքի ժամանակ խոչըն-
դոտներ չլինեն):

Միջնակարգ դպրոցի կոմունիստ ուսուցիչները յեվ
պատմաբանները կարող են սովորողների հետ ուսումնա-
սիրել ԱդրԽՍՀ-ի Սահմանադրությունը և «ԱդրԽՍՀ-ի Գե-
րագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը»:

Ակումբային աշխատողները՝ ներկայացումներ յեվ դա-
սախոսություններ անցկացնեն:

Շատ կարևոր ե նշել այն կարևոր ուշադրությունը, վոր
բերեզայցիները հատկացրել են անգրագետների մեջ քա-
ղաքական-դաստիարակչական աշխատանք անցկացնելուն:
Դա զգացվել ե նաև ուժերի տարատեղման ժամանակ.
յուրաքանչյուր ուսուցչի կամ կուլտբանակայինի հետ
զուգընթաց աշխատել ե մեկ քաղլուսավորչական աշխատող:

Դա պատահական չէ։ Բերեզայկու ակտիվիստների փորձը ցույց է տվել, թե որքան կարևոր է առաջին իսկ քայլերից գրագիտության ուսուցումը կապել քաղաքական—լուսավորական աշխատանքի, սովորողների քաղաքական դաստիարակության հետ։

---

# ԱՆԳՐԱԳԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆՀԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻՑ ՅԵՎ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՌԽՖՍՀ ԼԺԿ ՄԵԹԱՍԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 9/6 1937 Թ. ՀԱՄ. 50/11/102 ՆԱՄԱԿԸ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) ԺՈՂ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ ՅԵՎ ԱԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻՆ։

## Սովորողների նախապատրաստությունը քննություններին

Քննություններին պիտի նախորդի ուսուցչի համառոտ զրույցը սովորողների հետ, զրույց, որն աշակերտներին կպարզաբանի քննությունների նպատակները և ցույց կտա, թե ինչպես կարող են ոգնել քննությունները հետագա կրթության։ Այդպիսի զրույցը կապահովի աշակերտների լուրջ վերաբերմունքը դեպի ուսուցումը յեվ վերջ կտա այն լարվածությանը, որով հաճախ զուգորդվում են քննությունները վոչ ճիշտ հարցադրման ժամանակ։

Աշակերտն ինքը պետք է շատ լրջորեն պատրաստվի քննություններին, պիտի իրեն հաշիվ տա, թե ինչին նա պիտի հատուկ ուշադրություն դարձնի։

Անգրագետների դպրոցում ստուգում են կարդալու, գրելու և թվաբանության գիտելիքները՝ ծրագրի պահանջների համեմատ։



## ԿԱՐԴԱԼՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

### Կարդալու գիտելիքների ստուգման նյութը

Կարդալու գիտելիքների ստուգման նյութը կարելի յե վերցնել «կարդալ սկսողների համար թերթից», «Սկսնակ կարդացողների գրադարան» գրքույկներից և այլն, բայց այն պայմանով, որ այդ գրքերը նախորոք աշակերտների կողմից կարդացված չլինեն։

Տեքստի տպատառերը չպետք է շատ մանր լինեն, այլ աշակերտների համար սովորական։ Բովանդակությունը պետք է լինի ամենապարզ (տեքստում չպետք է լինեն նոր բառեր, նոր հասկացողություններ)։ Նյութն ընտրվում է իրեն՝ ուսուցչի կողմից, յուրաքանչյուր աշակերտի համար առանձին։

### Կարդալու ստուգման կարգը

Կարդալու ստուգումը կատարվում է անհատորեն։ Յուրաքանչյուր աշակերտին ուսուցիչը տալիս է նախորոք չընթերցած պատմվածքը կամ նրա մի մասը (10—25 տող), աշակերտը կարդում է տեքստն ինքն իրեն։ Յերբ աշակերտը կարդում և կշռադատում է կարդացածի բովանդակությունը, ուսուցիչը խնդրում է նրան մի քանի նախադասություններ կարդալ բարձր, իսկ ամբողջ կարդացած տեքստի շուրջը տալիս է 2—3 ստուգողական հարցեր, կամ յեթե տեքստը հարմար է պատմվածքի համար, առաջարկում է վերապատմել կարդացածը։ Լրիվ խմբակներում կարելի յե աշակերտներին բաժանել մի քանի վոչ մեծ խմբակների (2—5 հոգի)։

Այդ դեպքում նյութը տրվում է ամբողջ խմբակին միաժամանակ (բայց տարբեր յուրաքանչյուր աշակերտի համար), բարձր կարդալու և հարցերին պատասխան տալու համար աշկերտները կանչվում են ինքն իրեն կարդալուց հետո։ Աշակերտների կարդալու գիտելիքների ստուգման համար ուսուցիչը ստուգման ժամանակ նշում է կարդալու գլխավոր դեֆեկտները (կարդալու անճշտությունը, վատ հաս-

կանալը)։ Կարդացած պատմվածքի հասկացողությունը և կարդալու տեխնիկան տարեկան առաջադիմության հետ միասին հանգիստանում են կարդալու գիտելիքների գնահատականի հիմքը։

### Կարդալու գիտելիքների գնահատականը

1. «Գերազանց» գնահատական է տրվում, յեթե աշակերտը հասկացել է կարդացածը, և կարդացել է տեքստը առանց կարդալու տեխնիկայի դեֆեկտների (կարդացել է ամբողջական խոսքերով, չի խեղաթյուրել նրանց, պահպանել է կետադրական նշանները)։

2. «Լավ» գնահատական է տրվում, յեթե աշակերտը հասկացել է կարդացածը և կարդացել է տեքստը անշան խեղաթյուրումներով (միմիայն դժվար բառեր կարդալու ժամանակ առանձին վանկերի վրա շփոթվել է)։

3. «Միջակ» գնահատական տրվում է, յեթե աշակերտը հասկացել է կարդացածը, իսկ կարդալիս շփոթվել յեվ սկսել է կարդալ վանկերով և տառերով։

4. Աշակերտը չի թողարկվում անգրագետների դասընթացից այն դեպքում, յեթե նա չի հասկացել կարդացածը կարդալու վատ տեխնիկայի պատճառով։

## ԳՐԱՎՈՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

### Գրավորի ստուգման նյութը

Գրավորի ստուգման համար անց է կացվում ինքնուրույն գրավոր աշխատանք և թելադրություն։ Ինքնուրույն աշխատանքը կայանում է նրանում, որ աշակերտները գրավոր կերպով պատասխանում են ուսուցչի կողմից առաջադրված հարցերին։ Հարկավոր է ստուգել, կարող է, արդյոք, աշակերտը գրավոր կերպով պատասխանել նրան առաջադրած գրավոր և լավ ձեռագրով գրած հասարակ հարցին, օրինակ. յեղել ե՞ք, արդյոք, դուք Մոսկվայում։ Պիտի առաջադրվեն այնպիսի հարցեր, որոնց կարելի լինի պատասխանել հասարակ ձևով և լրիվ նախադասությամբ։



Թելադրության նյութը պիտի բաղկացած լինի 15—25 տողից վոչ ավելի։ Խոսքերը պիտի պարզ լինեն կիսատողից դրագետներին ըստ բովանդակության և պարզ ըստ ձևի (չպիտի լինեն յերկար և դժվար բառեր), տեքստը պիտի իր մեջ պարունակի խոսքեր ուղղագրական կանոնների, վորոնք ընդգրկված է ծրագրով։ Ցանկալի յե, վորպեսզի տեքստը կապակցված լինի։

### Որինակելի տեքստ

Դպրոցը բաժանորդագրվել է թերթի։ Մենք կարդացել ենք ընկերներ Ստալինի և Կալինինի ճառերը։ Թերթի համար նյութ ենք գրել։ Մենք սիրում ենք մեր հայրենիքը։

Թելադրության նյութը մշակվում է ուսուցչի կողմից։ Այն խմբակների համար, վորտեղ ուսուցանում են ուսուցիչները (կուլտբանակայինները), այլ վոչ մանկավարժները, թելադրության տեքստի կազմումը շրջլուսբաժինը հանձնարարում է փորձառու ուսուցչի (վարձու կամ հասարակական աշխատողի)։ Պետք է ապահովված լինի, վորպեսզի մինչև քննությունների որը նյութը դպրոցներում հայտնի չլինի և չքննարկվի։

### Գրավորի ստուգման կարգը

Ուսուցիչը թերթիկները բաժանում է աշակերտներին։ Աշակերտները ինքնուրույն կերպով թերթիկների վրա գրում են իրենց անունը և ազգանունը։ Ապա սկսվում է թելադրությունը։ Ուսուցիչը կարդում է թելադրության ամբողջ տեքստը։ Դրանից հետո նա կարդում է առաջին նախադասությունը և սկսում է թելադրել այն մաս առ մաս, չնահանջելով ընդունված դրական արտասանումից։ Այդպես թելադրվում է յուրաքանչյուր նախադասություն։ Վերջում ուսուցիչը մի անգամ ևս դանդաղ կերպով կարդում է ամբողջ տեքստը, հնարավորություն տալով աշակերտներին ստուգելու գրածը։

Թելադրությունից հետո ուսուցիչը գրավոր ձևով դրատախտակի վրա առաջադրում է 2—3 հարց, վորոնց աշա-

կերտները տալիս են գրավոր պատասխան լրիվ նախադասություններով, որինակ. յեղե՞լ եք դուք Մոսկվայում։ (Յես յեղել եմ Մոսկվայում)։

Մինչ պատասխան գրելը, աշակերտը պիտի պատասխանի հարցին բանավոր ձևով։ Բանավոր պատասխանները ուսուցչին տալիս է յուրաքանչյուր աշակերտ առանձին, իսկ գրում են պատասխանը բոլորը միաժամանակ։

Ինքնուրույն գրավորի և թելադրության վորակը տարբերական առաջադիմության հաշվառման հետ միասին հանդիսանում է գրավորի գնահատականի հիմք։

## Գրավորի գնահատականը

1. «Գերազանց» գնահատվում է, յեթե աշակերտն ընթեռնելի գրել է ինքնուրույն աշխատանքը և առանց սխալների կատարել է թելադրությունը։

2. «Լավ» գնահատվում է, յեթե աշակերտը ընթեռնելի կատարել է ինքնուրույն աշխատանքը և թելադրությունը գրել է առանց տառերի բացթողման յեվ խոսքերի խեղաթյուրման, բայց բաց է թողել նրանց մեջ ծրագրում նշված ուղղագրական կանոնների 1—2 սխալ։

3. «Միջակ» գնահատվում է, յեթե աշակերտը կատարել է ինքնուրույն աշխատանքը, պատահաբար բաց է թողել տառեր և թելադրությունը գրել է ծրագրում նշած ուղղագրական կանոնների 2—3 սխալներով, վորոնք չեն խեղաթյուրում գրածի իմաստը։

4. Աշակերտը չի թողարկվում անգրագետների դպրոցից այն դեպքում, յեթե նա բոլորովին չի կարողանում գրել ինքնուրույն կամ բաց է թողնում մեծ քանակությամբ տառեր և խոսքեր խեղաթյուրում մինչ այն աստիճան, վոր գրածը դժվար է հասկանալ։

# ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

## Թվաբանության գիտելիքների ստուգման նյութը

Թվաբանության յուրացման գիտելիքների ստուգման ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հարցերի վրա, վորոնք ունեն գործնական նշանակություն. կարողանալ գրել տարեթիվը, իմանալ մետրիքական չափերը, կարողանալ կատարել ստատիստիկ բնույթ կրող հաշիվներ, իմանալ թվաբանության չորս գործողությունները ծրագրի սահմաններում։ Հարկավոր է տալ հաշվումի 1—2 խնդիր, որինակ կաթնատվության, ցանքերի, բերքատվության և այլն (խնդրում պարտադիր կերպով պետք է լինեն բազմապատկում և բաժանում)։

Թվաբանության նյութը մշակվում է ուսուցչի կողմից։ Այն խմբակների համար, վորտեղ ուսուցանում են ուսուցիչները (կուլտբանակայինները), այլ վոչ մանկավարժները, շրջլուսբաժինը թվաբանության նյութի կազմումը հանձնարարում է փորձառու ուսուցչի (վարձու կամ հասարակական աշխատողի)։ Պիտի ապահովվի, վորպեսզի մինչև քննությունները դպրոցներում հայտնի չլինի և չմշակվի։

## Ստուգման կարգը

Խնդիրներն ու որինակները ուսուցչի կողմից գրվում են գրատախտակի վրա։ Կատարած աշխատանքն աշակերտները տալիս են ուսուցչին ստուգելու համար։ Այն աշակերտները, վորոնք չեն կատարել աշխատանքն ամբողջովին կամ մասամբ, կամ կատարելու ժամանակ թույլ են տվել սխալներ, լրացուցիչ կերպով ստուգվում են բանավոր։

## Թվաբանության գիտելիքների գնահատականը

1. «Գերազանց» գնահատվում է, յեթե աշակերտն առանց սխալների լուծել է խնդիրներն ու որինակները։

2. «Լավ» գնահատվում է, յեթե աշակերտը լուծել է խնդիրներն ու որինակները, բայց գործողությունների կատարման ժամանակ բաց է թողել պատահական սխալներ։

3. «Միջակ» գնահատվում է, յեթե աշակերտը չի կարողացել լուծել 2 գործողությամբ խնդիրները կամ գործողությունների կատարման ժամանակ բաց է թողել սխալներ, իսկ բանավոր ~~ստուգման~~ ժամանակ ուղղել է այդ սխալները։

6/29
38

ՀՍԽՀ-ՍՍՀ

4. Աշակերտը չի թողարկվում անգրագետների դպրոցից այն ժամանակ, յեթե նա չի յուրացրել թվաբանական գործողությունները ծրագրի սահմաններում։

«Գերազանց», «լավ», «միջակ» թվանշանները համարվում են փոխադրելի և ներկայացնում են իրենցից հիմք՝ դպրոցն ավարտելու տեղեկանք տալու համար։

## Դպրոցում աշակերտների կողմից ստացած գիտելիքների ամրացումը

Ստուգումից հետո յուրաքանչյուր աշակերտին հարկավոր է տալ նրա գիտելիքների բնութագիրը։ Վանկերով է կարդում թե ամբողջ խոսքերով, արագ թե դանդաղ և ինչպես է հասկանում կարդացածը։ Կարողանում է, արդյոք, ինքնուրույն գրություն գրել, ճիշտ է գրում, արդյոք, թելադրությունը, գիտե, արդյոք, համարակալումը, թվաբանական գործողությունները, կարողանում է, արդյոք, լուծել խնդիրներ։

Բնութագրի հիման վրա ուսուցիչը աշակերտներին բաժանում է խմբակների ըստ առաջադիմության, պարզում է հետ մնալու պատճառները և կազմում է հաշվետվություն։

Դրական գնահատական ունեցող աշակերտները փոխադրվում են կիսագրագետների դպրոցը, անփոխադրելի գնահատական ունեցող աշակերտները կազմակերպվում են հատուկ խմբակներում, վորում ուսուցումը շարունակվում է մինչև այն ժամանակ, յերբ անգրագետների դպրոցի ծրագիրը բավարար չափով կյուրացվի։

Բնութագրերը տրվում են աշակերտներին, աշակերտներն այդ բնութագրերը հանձնում են ուսուցիչներին, վորոնք պիտի շարունակեն ուսուցումը։ Դրանք պիտի ոգնեն ուսուցչին ճիշտ հողի վրա դնելու հետագա ուսուցումը և հատկապես հետ մնացող աշակերտների հետ տարվելիք աշխատանքը։

Քննություններից հետո հարկավոր է աշակերտների հետ կազմակերպել զրույց, վորում անհրաժեշտ է նշել, թե ինչպես նրանք պետք է պարապեն հետագայում, ինչ է հարկավոր ամրացնել, կրկնել, վոր աշակերտները պարտավոր են ամեն որ, թեկուզ և քիչ, կարդալ։ Կարևոր է, վորպեսզի դպրոցը խնամք տանի այն մասին, վորպեսզի աշակերտները տանն ունենան ընթերցելու համար գիրք։



ՌԽՖՍՀ-ի Լուսավորության ժողկոմի տեղակալ՝ Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

Թարգմանությունը խմբագրեց՝ Հ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0237517

Сдано в набор 7/VII-38 г.
Разрешено к печати 19/VIII-38 г.
1¼ печ л. 60.000 тип. зн.

Главлит 4539. Заказ 1890. Тираж 3000.
Типография „Красный Восток“, Баку, улица Юного пионера, 84.

54.767

Управление Школ Взрослых Наркомпроса

# КАК ПРОВОДИТЬ КОМПЛЕКТОВАНИЕ ШКОЛ И ГРУПП ЛИКВИДАЦИИ НЕГРАМОТНОСТИ

Издание Наркомпроса А.ССР

Баку—1938 г.